

371.3

«ԵՐԵՔ ԲԱՆԱԼԻ ԵՎ ՄԵԿ ԿՈՂՊԵՔ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արզումանյան Արմենուհի  
ԵՊՀ, Հայաստան

**Համառոտ ներածական:** «Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները՝ վերտառությամբ հողվածում փորձել ենք ցույց տալ մեթոդի կիրառման տարբեր մոտեցումները՝ պայմանավորված ուսուցանվող նյութի բնույթով և աշակերտների տարիքային խմբով: Մեթոդի կիրառման յուրահատկությունները տեսանելի ենք դարձրել հայ գրականության դպրոցական ծրագրում ներառված գրական երկերի վերլուծության հիման վրա:

**Բանալի բառեր:** Համեմատական-վերլուծական մտածողություն, գաղափարական խնդիրներ, կենսափիլիսոփայական շերտեր, պատկերակերտման միջոցներ:

**Հիմնախնդիրը:** Հետազոտության հիմնախնդիրն է բացահայտել «Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները, մեթոդի որպես ուսուցման հետաքրքիր ձևի առավելությունները՝ նյութի առավել խորքային վերլուծության հնարավորություն, անցած նյութի համակարգում և ամփոփում, գիտելիքների ընդհանրացում:

**Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն:** Մեթոդական գրականության մեջ կան վերոնշյալ հիմնախնդրին նվիրված մի շարք գիտական հետազոտություններ՝ «Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ» (ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008), «Ուսուցման արդյունավետ հնարներ» (Ս. Խաչատրյան, «Էր. Ֆ. Էրբրտ» հիմնադրամ, Հայաստան, 2020), Technology for literacy teaching and learning. New York. Houghton Mifflin Company (Valmont W., 2006), Classrooms that work (Allington R., Cunningham P., Boston, Allyn and Bacon, 2004):

Վերոնշյալ հեղինակները փորձել են յուրովի ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդներին բնորոշ առանձնահատկությունները, կիրառման յուրահատկությունները:

**Հողվածի նպատակն է** հետաքրքիր դիտարկումներով բացահայտել վերոնշյալ մեթոդի էությունը, սովյալ մեթոդով նյութի ուսուցման սկզբունքները՝ մատնանշելով և հիմնավորելով դասավանդման այդ եղանակի համապատասխան առանձնահատկություններով պայմանավորված առավելությունները, ուսուցման նպատակից բխող յուրահատկությունները:

**Հետազոտության նորույթն է** «Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման տարբեր մոտեցումների դիտարկումը: Առաջին անգամ, ուսուցանվող նյութով պայմանավորված, քննաբանվել են մեթոդի կիրառման տարբեր մոտեցումներ՝ շեշտադրելով դրանց արդյունավետությունը, առավելությունները:

**Հիմնական նյութի շարադրանքը:** «Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդը հիմնականում կիրառվում է նյութի ամփոփման փուլում: Մեթոդի էությունը հետևյալն է. ուսուցչի կողմից առաջադրված ելակետային հարցադրման պատասխանը գտնելու համար տրվում են սովյալ գրական երկի բովանդակությունից բխող բնորոշումներ, ուղղորդող, հուշող, սովյալ հարցը ինչ-որ չափով ամբողջացնող բնութագրումներ, որոնք այն բանալիներն են, որոնց օգնությամբ պետք է բացվի կողպեքը՝ հիմնական հարցադրումը: Կիրառվող բանալիների թիվը պայմանական է. այն կարող է լինել երեք և ավելի ու կախված է ուսուցանվող նյութի ծավալից, հարցադրման բովանդակությունից, աշակերտների

իմացական մակարդակից [5]: Վերոնշյալ մեթոդը կարելի է կիրառել տարբեր մոտեցումներով՝ պայմանավորված աշակերտների տարիքային խմբերով և ուսուցանվող նյութով:

### **Մոտեցում 1-ին**

«Երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդը ցածր դասարաններում կարելի է կիրառել հետևյալ կերպ. որևէ ստեղծագործություն, բանաստեղծություն, հեքիաթ ուսուցանելուց հետո ուսուցիչը կարող է մեթոդի օգնությամբ ստուգել, թե որքանով են աշակերտները նյութը յուրացրել, որքանով են հիշում անցած ստեղծագործությունը: Օրինակ՝ Թումանյանի առակների ու լեգենդների ուսուցման ամփոփման փուլում ուսուցիչը կարող է բանալի բառերի, բառակապակցությունների օգնությամբ ստուգել իր կողմից առաջադրված կողպեքի (նյութի իմացությունը ստուգող հարցադրման) բացման աշակերտների հմտությունները: Բնագրի ընթերցումը ստուգելու համար կարելի է կազմել հետևյալ բանալի բառերն ու բառակապակցությունները.

Կողպեք («Շունն ու կատուն») – բանալիներ (գդակ, գառան մորթի, ցրցամ տալ):

Կողպեք («Չարի վերջը») – բանալիներ (մի սար, մի ծառ, կկու, աղվես):

Կողպեք («Մի կաթիլ մեղրը») – բանալիներ (խանութպան, ասլան շուն, կատու):

### **Մոտեցում 2-րդ**

Միջին դասարաններում մեթոդը կարելի է կիրառել հետևյալ կերպ. ուսուցանվող ստեղծագործությունից պետք է ընտրել գրական երկի բովանդակությունը ներկայացնող երեք պարբերություն, կերպարները բնութագրող սյուժետային հատվածներ, արտասյուժետային տարրեր, որոնք կլինեն այն բանալիները, որոնցով աշակերտը կկարողանա բացել կողպեքը՝ նշելով ստեղծագործության անվանումը և ամբողջացնելով բովանդակությունը: Ուսուցիչը տվյալ հեղինակի ստեղծագործությունների ուսուցման ամփոփման փուլում կարող է այդ գրողի պատմվածքների կերպարների խիստ բնութագրական հատվածներից պատրաստել բանալի-պատկերներ և դրանց միջոցով ստուգել ուսուցանված նյութի՝ աշակերտների կողմից ընկալման մակարդակը: Օրինակ՝ Նար-Դոսի պատմվածքների ուսուցման ամփոփման փուլում «Ես և նա» պատմվածքից որպես բանալիներ կարելի է օգտագործել բնագրային այն հատվածները, որտեղ առավել ընդգծված են պատմվածքի կերպարների նկարագիրը, հերոսների հոգեբանությունը, որոնց հիման վրա աշակերտները կգտնեն կողպեքի՝ պատմվածքի գաղափարական հարցադրման բացահայտման ճանապարհը: Որպես բանալիներ կարելի է առանձնացնել սյուժետային հետևյալ հատվածները՝ «Մի կորած մարդու հիշատակարանից» հեղինակային գրառումը, պատմվածքի առաջին հերոսի՝ Եսի սիրած աղջկա՝ իրեն ուղարկած նամակը, Ջուլետտայի՝ Անտոնիոյին ուղղված երկտողը: Այս հատվածների ընթերցումից հետո աշակերտները կնշեն գրական երկի անունը, կամբողջացնեն ստեղծագործության բովանդակությունը և կշեշտադրեն պատմվածքի գաղափարական հարցադրումները՝ կյանքի հասցրած դժվարություններից չընկրկել, սոցիալական անհավասարությունից առաջացած խոչընդոտները պատճառ չդարձնել կործանման, այլ, ընդհակառակը, ուժ ստանալ պայքարելու, հասնելու ցանկալի բարձունքներին՝ մերժելով «վերևի» ու «ներքի» սոցիալական հակադիր բևեռների վճռորոշ լինելը:

### **Մոտեցում 3-րդ**

Բարձր դասարաններում, հատկապես ավագ դպրոցի հումանիտար հոսքում, մեթոդը կարելի է կիրառել այնպիսի նյութի ուսուցման ժամանակ, որը առավել խորքային վերլուծություն է պահանջում: Այս դեպքում մեթոդը կարելի է կիրառել նյութի մատուցման փուլում՝ ուսուցանվող թեմայի առաջին ժամերին՝ որոշակի գեղարվեստական պատկերներ դիտարկելով որպես բանալիներ ելակետային հիմնախնդրի բացահայտման համար: Եթե տվյալ գրական երկում կան խորհրդանշական պատկերներ, որոնք խտացնում են տվյալ հեղինակի կենսափիլիսոփայությունը, աշխարհայացքը, կենսամտածողությունը, այդ դեպքում խորհրդանշատ պատկերները կարելի է դիտարկել որպես բանալիներ՝ բացելու համար կողպեքը՝ ստեղծագործության գաղափարական հարցադրումները: Օրինակ՝ Չ. Մաթևոսյանի «Բեռնաձիեր» շարքի պատմվածքները՝ «Ալիս», «Նարինջ գամբիկը», «Նժույզս, նժույզս» ստեղծագործություններն ուսումնասիրելիս ուսուցիչը կարող է վերոնշյալ մեթոդի օգնությամբ բացատրել մաթևոսյանական կենսափիլիսոփայության հիմնական շեշտադրումները:

Ուսուցիչը պետք է նշի, որ Մաթևոսյանի գեղագիտական տիրույթում ձիապատկերը կարելի է դիտարկել որպես խորհրդանշատ, որն ունի խոհափիլիսոփայական, հոգեբանական տարաշերտ

խաչաձևումներ: Մեծ է պատկերի ներքին տարողությունը. ձիապատկերում երևում են գյուղական կյանքի բազմազան տեսագծերը, վարպետորեն զուգորդվում են մարդու և ձիու մտորումները, երազանքներն ու հիապոթաֆությունները: Ձիապատկերի հոգեբանական դաշտը գոյավորվում է գյուղաշխարհի կենսաձևերի և այդ եզերքի մարդու աշխարհընկալման զուգորդումներով: Ձիապատկերը մաթնոյանական պատումում ունի հետաքրքիր կառուցվածքային տրոհում՝ նժույգ-գամբիկ-հովատակ-բեռնաձի, որոնք էլ ուսուցիչը կարող է կիրառել որպես բանալիներ՝ իր վերլուծական խոսքը նպատակակետին հասցնելու կամար: Ձիապատկերի կառուցվածքային այս շերտերում տեսանելի է Մաթնոյանի աշխարհայացքի և կենսափիլիսոփայության ծիրը:

Մաթնոյանական պատումում ձիապատկերն ունի իմաստային հետաքրքիր զարգացումներ: Մաթնոյանական ձիապատկերի կառուցվածքային տարաձևումները՝ **նժույգ-գամբիկ-հովատակ-բեռնաձի**, որպես հոգեբանական դրսևորումների խորհրդանիշ, իմաստային փոփոխությունների ընթացք ունեն: Ձիապատկերի հոգեբանական հետագծի նախակետը նժույգ-ձի պատկերային միավորն է, որի խոհական ընկալումների տիրույթում շեշտադրվում են մարդկային երազանքը, երազի թներին ճախրող հույզերն ու սպասումները, հոգու՝ դեպի գեղեցիկը հավերժական սլացքը: Ձիապատկերի կառուցվածքային վերջին հանգրվանը՝ բեռնաձին, դառնում է հոգնաբեկ աշխատավորի, իր հող ու ջրին անքակտելի կապերով ագուցված ռանչպարի խորհրդանիշ, մարդ, որն իր ուսերին է տանում աշխարհի բեռը՝ դառնալով յուրօրինակ մի բեռնաձի: Իսկ նժույգ-բեռնաձի պատկերների միջտարածական տիրույթում կան ձիապատկերի այլ զուգորդումներ՝ *գամբիկ, հովատակ, քուռակ*, և ձիու հումանիշային այս շարքը պատկերի մեջ դառնում է մարդկային հարաբերությունների բացահայտման միջնորդավորված օղակ, որոնցից յուրաքանչյուրում երևում են մարդկային հոգու տարբեր շերտեր, աշխարհայացքային տարբեր մոտեցումներ:

Ուսուցիչը պետք է նշի, որ երազի ու իրականության, պատրանքի ու դառը ճշմարտության, գեղեցիկի ու ցավի բախումից ծնվող մարդկային հոգու դրաման է մաթնոյանական ձիապատկերի հոգեբանական տարածքում: Իսկ հույզերի այդ ճանապարհի նախակետի՝ նժույգի հոգեբանական շեշտադրումը սկսվում է պատումի խորագրից՝ **«Նժույգս, նժույգս»**: Ուսուցիչը պետք է բացատրի, թե ինչու է պատմվածքի խորագրում *նժույգ* բառը կրկնվում, ինչու է երկու դեպքում էլ գործածվում *ս* ստացական հոդը: Սովորաբար գրական երկի խորագիրը դառնում է ստեղծագործության մեջ շեշտադրված գաղափարական հարցադրումների բացահայտման բանալին: Թեև ողջ պատմվածքում Մաթնոյանը չի գործածում *նժույգ* բառը, բայց գրական երկի խորագրի նման անվանումով շեշտադրում է այն միտքը, որ թեև ծմակուտյան աշխարհում իր հող ու ջրին նվիրված յուրաքանչյուր հողագործ իր տեսակի մեջ յուրօրինակ մի բեռնաձի է, բայց նրանց մեջ եղել է կամ կա այն խենթ ու կրակոտ նժույգի տեսիլքը, որը յուրաքանչյուրի համար խիստ անհատական է: Նրանցից յուրաքանչյուրը հոգու նվիրական անկյուններում պահում է երազ-նժույգի ցնորք-պատրանքը՝ որպես հեռուներում մնացած, երազի թներին ճախրող ցանկություն, երազանք, որը տխուր ու հոգսաշատ ներկայի գորշ գույների հետ անհամատեղելի է: *Ս* ստացական հոդը պատկերի մեջ ձեռք է բերում յուրաքանչյուրի հուզաշխարհի խիստ անձնական հոգեբանական տիրույթ. պատկերի գեղագիտական այս հնարքը շեշտադրում է և՛ սիրահարված պատանի հեղինակի՝ վաղվա օրվա իր երազանքի միայն իրենը դարձնելու ձգտումը, և՛ Փոքր հորեղբոր՝ Թիֆլիսի քաղաքային կյանքի փոթորկուն ալիքների մեջ ծփացող անհասանելի սիրո՝ Կարինեի երազ պատկերի հավերժ զգացողության խորհուրդը, և՛ հեղինակի մոր՝ քաղաքին մոտիկ գյուղի աղջկա՝ քաղաքային կյանքի պատրանքի անընդհատ վերհիշումը, և՛ հեղինակի հոր՝ դեպի Մախաչկալա ձգվող պատանեկան երանելի հուշերի արթնացումը: Նրանցից յուրաքանչյուրը, կքած առօրյա հոգսերի ծանր բեռան տակ, միննույն է, իր հոգու խորքում ունի իր երազանքների նժույգը...:

**Նժույգ-ձիապատկերի** խորհուրդը առավել ընդգծվում է Փոքր հորեղբոր հուզաշխարհի ելնեջումների զուգորդումներում: Հեղինակը ցույց է տալիս հերոսի՝ մինչ գյուղաշխարհի գրված ու չգրված օրենքների համաձայն բեռնաձի դառնալը այդ կարգավիճակին ամրագրվելու հոգեբանական նախնական ճանապարհը: Իսկ այդ ճանապարհին մարդկային հույզերի հոգեբանական անցումները գրեթե միշտ համահունչ են նժույգ-բեռնաձի հոգեբանական անցումային տարածությանը, որտեղ տեսանելի են երազի և իրականության հակադրությունը, հոգու լուսավոր երազանքների և կյանքի առօրյա խնդիրների բախումը:

Փոքր հորեղբայրը հինգ տարի Թիֆլիսում ծառայելուց հետո վերադարձել է գյուղ՝ իր հետ բերելով մեծ աշխարհի շնչառության երանելի զգացողության պատրանքը, տեսլացած երազ աղջկա՝ Կարինեի սիրատուչոր հայացքի տաք ելևէջումները: Նրա հույսերն ու սպասումները փշրվում են՝ բախվելով տխուր իրականության պահանջներին: Գյուղական կյանքի հրամայականը՝ վերադառնալ գյուղ, ստանձնել ծեր ծնողների խնամքն ու հոգատարությունը, ընտանիքի առօրյա հոգսերի բեռը, փշրում է հերոսի երազի ճախրանքը, ու կամաց-կամաց նրա մեջ մեռնում է լուսավոր երագների նծույզը...: Մաթևոսյանական պատումում նծույզից բեռնաձի կեցության ձևերի անցումը կատարվում է դրամատիկ հոգեվիճակների զուգորդումներով: Փոքր հորեղբոր մեջ հեշտորեն չի մարում նծույզայինը: Պատումի հենց սկզբում տեսնում ենք նրա մեջ արթնացած երազ-նծույզի պայքարը իրականության դեմ: Իրականության տխուր գույներից ծառս է լինում նրա ներաշխարհի նծույզը՝ կոհիլ տալով նախագահի, դպրոցի տնօրենի, հարազատների դեմ...: Պատումում ձիապատկերը դառնում է հերոսի հոգեբանական անցումների արտահայտման տարածական դաշտ: Փոքր հորեղբայրը երամակից ընտրում է չորս տարեկան մի ձի, որն իր նման հիսուններեք ձիերի մեջ տարբերվում էր իր սլացքով, իր անսանձ պոռթկումով, ինչպես «շիկացած ածուխ»: Պատմվածքում «**շիկացած ածուխ ձի, հանգած ածուխ ձի**» պատկերներում որոշի փոփոխությունը իր մեջ խտացնում է հերոսի հոգեվիճակը: Հերոսի հուզաշխարհում ալեվետող զգացողությունները շիկացման, այրումի աստիճանի փոթորկում են նրա ներաշխարհը: Նա հույս ունի, որ յուրայինները կհասկանան իրեն՝ թույլ տալով հեռանալ գյուղից դեպի երազ ափեր: Մակայն նա անկարող է անտեսել յուրայինների հորդորները, և կյանքի չքոված օրենքները հանգցնում են հոգու կրակը [1]: Հերոս-ձիապատկեր զարգացումներին զուգահեռ բացվում է մարդկային հոգու դրաման. վիրավոր ձիուն պետք է սպանել. սա է կյանքի օրենքը, երազ Կարինեին պետք է մոռանալ. սա է իրականության հրամայականը: Եվ մեծ եղբոր հրամանով փոքրը սպանում է ձիուն, իսկ դա կատարվում է ցավի տակ անզգայացած, անզորությունից անեացած. աշխարհն ու հեռաստանները անտեսանելի ու անընկալելի էին նրան. «Եվ իրեն խլացրած՝ չլսելով արտույտների ճախրը, և իրեն բթացրած՝ չզգալով հովի զնգոցը լեռնային վճիտ օդում, Փոքր հորեղբայրը գնաց դեպի ձին» [4]: Եվ ձին սատկեց, երազը մարեց..., բայց պետք էր նաև ձին քերթել...»: Ձիապատկերի հաջորդող հասվածում՝ ձիու սպանելուց մինչև ձին քերթելը, բացվում են հերոսի հուզաշխարհի բարդ շերտերը, հակադիր հոգեվիճակներից ծնված հոգեցունց զգացողությունները: Եղբայրների վեճը դառնում է երազի և իրականության բախման հոգեբանական աստղձ, որին միահյուսվում են ձիապատկերի զարգացումները: Լալիս է Փոքր հորեղբոր հոգին. Կարինե, Թիֆլիս, երազ... դրանց ի հակադրություն՝ գյուղական կյանք, ծնողների խնամք, Լուսիկ...: Հոգեվիճակների այս բախմանը զուգահեռ՝ շարունակվում է ձիու և մարդու ճակատագրերի միաձուլումը: Փոքր հորեղբայրը մեծի հրահանգով սրում է կացինը, դառնացած բարձրանում լեռը և գրեթե խելագար քերթում ձին: «Եվ չկային նրա համար հովի զնգոցը, արտույտների ճախրը, արտույտների երգը: Եվ լեռակեր բորենու պես ետ տալով հողը, նա քերթեց ձին» [4, էջ 326]: Ձիապատկերի այս տարածքը դառնում է հերոսի երազի կորստի վերջին հանգրվան. աշխարհի գույներին ու ձայներին անհաղորդ՝ երազաթափ է լինում մարդկային հոգին, փշրվում է երազ տեսիլքը, մարում է մարդու մեջ նծույզը:

Ուսուցիչը պետք է նշի, որ ձիապատկերի զարգացումների հետագիծը՝ **նծույզ- զամբիկ-հովատակ-բեռնաձի**, հարընթաց շարժ ունի: Ձիապատկերի հաջորդ հոգեբանական շերտը՝ **զամբիկ-հովատակ**, հոգեբանական զարգացումների հետաքրքիր ընթացք ունի: «**Նարինջ զամբիկը**» պատմվածքում ձիապատկերի նախնական դրսևորումներում տեսանելի է առհասարակ բնության մեջ երկու հակադիր սեռերի՝ էգի և արուի (ձիապատկերում՝ զամբիկ և հովատակ) հարատև կապի խորհուրդը՝ որպես տեսակի շարունակության, լինելիության ճանապարհի նախակետ: Այդ կապը ամուր թելերով ձգում է երկու սեռերի բնագոյային արթնացումները՝ որպես բնությունից ժառանգած վեհագույն ցանկություն, որը հզոր է և՛ կենդանական աշխարհում, և՛ մարդկային հարաբերություններում: Բնության մեջ տեսակի շարունակման բնագոյային կանչը դառնում է ձիապատկերի հոգեբանական տարածական կենտրոնը, իսկ տեսակի պահպանման բնության մեջ նախասահմանված ձևը՝ էգի ու արուի սեռային մղումների բարձրակետը՝ բեղմնավորման ձգտումը՝ պատկերի ներքին շնչառությունը: Պատումում նարնջագույն հովատակի՝ դեպի էգ ձին սլացքի նկարագրությունը դառնում է յուրօրինակ գեղանկարչական պատկեր: Գրականագետ Վ. Գաբրիելյանը, մաթևոսյանական խոսքը որակավորելով որպես բանաստեղծական

արձակ, գրում է. «Բայց ահա նարնջագույն հովատակի հարձակումը ուրիշ մի բեռնաձիու վրա, նրա վարձը բանաստեղծական գեղեցիկ մի պատկեր է» [2, էջ 169]: «Հուրհրատող նարինջը այդ կանաչ աշխարհի մեծ արեգակի տակ վառվռելով թռչում էր դեպի էն խեղճ բեռնաձին, ասես քամին հրդեհ էր քշում, և պղնձագույն պոչը հագիվ չէր պոկվում, հագիվ էր հասցնում նրա ետևից» [4, էջ 329]: Եվ այս պատկերին հաջորդում է մարդկային բնական մղումը. «-Ու իս, մարդ ձի պիտեր» [4, էջ 329]: Ձիապատկերից լսելի դարձող ազատության բնագոյի, կրքի, այրումի շնչառությունը ցանկալի է մարդ արարածին. անսանձ վայելումի, հոգու և ազատության կանչի նույն մոլեգին բախումները կան մարդկային հոգում:

Ուսուցիչը պետք է ցույց տա, թե ինչպես են մաթևոսյանական ձիապատկերում աստիճանաբար խտանում գույները, ուժգնանում է պատկերի ներքին ուժը. ձիու վարձը դառնում է դեպի ազատություն տենչացող ոգեղեն ուժի խորհուրդը, որը պատրաստ է փշրել ամեն կապանք ու խոչընդոտ՝ ազատության բաղձալի ափերը հասնելու համար: Շարժուն, գունեղ, բառային կրկնությունների ուժգնացումներով հագեցած ձիապատկերը դարձյալ ավարտվում է մաթևոսյանական փիլիսոփայության ընդգծված շեշտադրումով. երկրային տարածքներում երազ ազատության բաղձալի ճախրանքը կեցության առօրեական ձևերի մեջ խեղդվում է, կորցնում է տիեզերական տարածքներ հասնելու ուժը: Այո՛, ափսոս, որ երազ ցանկության ազատության ալիքներում ճախրանքը ընդհատվում է երկրային արժեքների գնահատումների տիրույթում: Ձամբիկ ձին անպտուղ է, գյուղացու կեցության ճանապարհին՝ անցանկալի: Ձին հայտնվում է քաղաքում՝ կրկեսում: Մպանվում է նրա մեջ ազատ հեռաստանների, անծայրածիր արտերի, գրնգուն հովերի կանչը: Լինելիության նոր ձևի մեջ նա օտար է ինքն իրեն, իր աշխարհին, իր էությանը: Նրա մեջ մարել են հեռուններում մնացած եզերքի կեցության ձևերի մեջ ամրակայված զգացողությունները՝ հովատակի սարսափը ջլերի մեջ, չարածճի երեխաներից ծեծվող, բռններից քրքրվող բեռնաձիու անհանգստությունները, դեպի կանաչ տարածքները սլանալու ցանկությունը. նա ապրում էր առանց ինքն իրեն...: Օտարվեց, որովհետև չծնեց, չբարձվեց, չսնքաց..., նրա մեջ մեռավ բեռնաձին...

Ուսուցիչը պետք է նշի, որ կենսափիլիսոփայության այս հենքի վրա Մաթևոսյանը ստեղծում է **նժույգ-բեռնաձի** գուգահեռը՝ հաստատելով բեռնաձիու՝ որպես ստեղծարար կյանքի խորհրդանիշ: Բեռնաձին՝ որպես գաղափարական խտացման տարածական դաշտ, առավել տեսանելի և շեշտադրված է «**Ալխոն**» պատմվածքում: Մաթևոսյանական ձիապատկերի տարաշերտ կառույցներում առավել ընդգրկուն է բեռնաձիու պատկերը՝ որպես աշխատանքի ու արարումի վեհագույն խորհուրդը խտացնող ուժ, հոգսաշատ կյանքին դիմակայելու և ազգայինի պահպանման խորհրդանիշ: Ձիապատկերի՝ որպես պատկերակերտման գեղագիտական միավորի մոտեցումը ինքնանպատակ չէ. այն ասելիքի շեշտադրման տարածական դաշտն է: Ձիապատկերի ձևակառույցները, ինչպես յուրաքանչյուր պատկեր, միշտ էլ ձևավորվում են շեշտադրման որոշակի սկզբունքով: Ժողովրդական կյանքի ակունքներից սնվող մաթևոսյանական կենսահայեցողությունը խտացված է ձիապատկերի ենթաշերտերում: Պատումում բեռնաձիու պատկերի կառուցվածքային ամբողջության մեջ մեծ խորհուրդ է ստանում գեղագիտական մի միավոր՝ մենախոսությունը, որը տեսանելի է միայն բեռնաձիու պատկերում: Այստեղ էլ ձիապատկերը հյուսվում է մարդու և կենդանու ներաշխարհային հույզերի խաչաձևումներով: Պատումի սյուժետային գործողությունների առանցքում Ալխոն ձիու և գյուղացի Գիքորի մենախոսություններն են: Հետաքրքիրն այն է, որ Ալխոնի և Գիքորի մենախոսությունների կենսափիլիսոփայության ծիրը գրեթե նույնն է: Ալխոն և Գիքորը, որը թեև գոյատևումի ճանապարհին ունեցել է սայթաքումներ, աշխարհագնահատման նույն հարթության վրա են: Պատումում ձիապատկերը հյուսվում է մարդուն ու աշխարհը արժևորելու խոհափիլիսոփայական հենքի վրա: Աշխարհի գնահատումների դիտարկումները ինքնատիպ զարգացում են տալիս ձիապատկերին: Հետաքրքիր է պատումում ձիապատկերի ներքին ձգողական դաշտը. ոչ թե ձին է իր մտորումներով ու աշխարհընկալումներով մոտենում մարդուն, այլ հակառակը՝ մարդը՝ ձիուն. սա է Մաթևոսյանի աշխարհագնահատման ուղղությունը: Իսկ այս ճանապարհին մարդը, ավելի մոտենալով բնության անաղարտ ակունքներին, մաքրագործվում է: Սյուժետային զարգացումներին, դեպի Ղազախ տանող ճանապարհի ոլորանների կծկումներին գուգահեռ՝ շեշտադրվում են Ալխոնի և Գիքորի

աշխարհարժևորման մոտեցումները, որոնք երևում են նրանց մենախոսություններում: Իսկ այդ մոտեցումները երևույթների գնահատումների շատ հարթակներում նույնանում են, որը կատարվում է մարդու՝ դեպի կենդանու՝ բեռնաձիու ներաշխարհային թափանցումների արդյունքում: Գիքորը, գոյատևումի իր ճանապարհին հաճախ բախվելով մարդկանց արատավոր երևույթներին, երբեմն ինքն էլ գնալով զարտուղի ճանապարհով, այնուամենայնիվ, ներսում կատարվող այդ բախումների արդյունքում հասկանում է, որ ինքն էլ մի բեռնաձի է, իրեն այնքան հարազատ է զգում Ալխոյին: Եվ այդ կետից նրանց աշխարհագնահատման մեկնակետը նույնանում է: Նախ՝ աշխատանքը՝ արարումի խորհուրդն է դեպի հավերժի ճամփան տանող միակ ուղին: Գետափին տեսնելով կանանց՝ Ալխոն թախծում է. «... Վիթխարի մարդաթողը անում էր իր փափուկ պտույտները արևի տակ: Եվ այդ ամենը հանգած ու հզոր էր, ինչպես չաշխատող ջրաղացի ջուրը, ոտքի վրա փտող ծառը, տակին փռված արտ չունեցող արևը» [4, էջ 164]: Թախծում է Ալխոն, որովհետև այդպես ճիշտ չի կառուցվում կյանքի ընթացքը, որովհետև ծուլությունը՝ այդ «վիթխարի մարդաթողը», խեղում է գեղեցիկ կյանքի անընդհատ նորոգող ու ստեղծարար ուժի խորհուրդը: Զիու լուր մտորումները բարձրաձայնվում են Գիքորի կողմից որպես անբան աղջիկներին ուղղված հորդոր-պատգամ՝ գեղեցիկի արարման գույներով զարդարել կյանքի ճանապարհը: Գիքորը մերժում է անգամ հարազատներին, որոնք մեղկ կյանքի ուղին են ընտրում: Գիքորի աշխարհագնահատման այս գիծը առավել ընդգծվում է ձիապատկերի հոգեբանական շերտերում: Բեռան տակ կքած ձին հասկանում է, որ ճշմարիտը իր անցած ու անցնելիք ճանապարհն է, որովհետև չնայած հարատև բեռան ծանրությանը, այն թոթափելու ցանկությանը, «պայտվելու սարսուռին և պայտվածի միամիտ գոռոգությանը», հեռուններից կանչող զամբիկի կարտոնին և հովատակի վայրի հարձակումներին՝ ինքը պետք է անցնի այս մեծ աշխարհի մեջ իր բաժին ճանապարհը, իրեն սահմանված տարիների ընթացքը ստեղծողի, արարողի օրհնանքով լեցուն պետք է լինի:

**Եզրակացություն:** Այսպիսով՝ ուսուցիչը, «երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդի օգնությամբ կառուցելով իր վերլուծական խոսքը, ձիապատկերները դիտարկելով որպես բանալի կառույցներ, պետք է դրանց միջոցով բացի կողպեքը՝ ծմակուսյան աշխարհի կենսափիլիսոփայությունը, որը, շաղախված գյուղական կենցաղի ճշմարիտ գույներով, դառնում է մաթնոսյանական պատումի գեղագիտական աստղծր:

«Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդը նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային ուսումնասիրությանը: Աշակերտները կարողանում են ամբողջական նյութը ելակետային հարցադրումներով տարանջատել և դրանց միջոցով ձեռք բերել գեղարվեստական պատկերի գեղագիտական առանձնահատկությունները բացահայտելու հմտություններ: Նրանց մոտ զարգանում են վերլուծական մտածողությունը և հետաքրքիր եզրահանգումներ կատարելու կարողությունները [3]:

#### **Օգտագործած գրականության ցանկ**

1. Աղաբեկյան Կ., Հրանտ Մաթնոսյան, Ծմակուտի վիպասքը, ԵՊՀ հրատ., Եր., 1988:
2. Գաբրիելյան Վ., Դիտարկումներ գրականության ճանապարհին, Եր., ԵՊՀ հրատ., 2018:
3. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, «Էր. Ֆ. Էբերտ հիմնադրամ», 2020:
4. Մաթնոսյան Հ., Երկեր, հ.1, Երևան, 1985:
5. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008:

**«ТРИ КЛЮЧА И ОДИН ЗАМОК»: ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ СОВРЕМЕННОГО МЕТОДА ОБУЧЕНИЯ**  
**Арзуманян Арменуи**  
*ЕГУ, Армения*

#### **Аннотация**

**Краткое введение.** В данной статье мы попытались показать различные подходы к применению рассматриваемого метода «трех ключей и одного замка», связанные с характером изучаемого материала и возрастной группой учащихся. Свообразные особенности применения метода проявились при анализе литературных произведений, включенных в школьную программу армянской литературы.

**Ключевые слова и словосочетания.** Сравнительно-аналитическое мышление, идеологические задачи, биофилософские слои, средства иконописания.

**Проблема исследования:** выявить особенности применения трех ключей и одного замка современного метода обучения, преимущества метода как интересной формы обучения: возможность более глубокого анализа материала, систематизация и обобщение прошедшего материала, обобщение знаний.

В методической литературе есть ряд научных исследований, посвященных вышеуказанной проблеме: «Современные методы обучения, приемы, упражнения», Лорийский филиал, г. Ванадзор, 2008 г., «Эффективные приемы обучения», С. Хачатрян, Фонд Эр. Ф. Эберт, Армения, 2020 г., Филиал Лори, г. Ванадзор, 2008 г., «Эффективные приемы обучения», С. Хачатрян, фонд Эр. Ф. Эберт, Армения, 2020 г., Вальмон, Бт, «Технология для обучения грамоте и обучение». Нью-Йорк. Компания Хоутон Миффлин, 2006 г., Элинг Р.И Каннингем П. «Классные комнаты, которые работают». Бостон, Эллин и Бэкон, 2004 г.

Вышеупомянутые авторы пытались по-своему представить особенности, присущие современным методам обучения, особенности применения.

**Цель статьи:** с интересными наблюдениями выявить сущность вышеуказанного метода, принципы обучения материала данным методом, указав и обосновав преимущества, обусловленные соответствующими особенностями этого метода преподавания, особенности, вытекающие из цели обучения.

**Новизной исследования** является рассмотрение различных подходов к применению современного метода обучения трех ключей и одного замка. Впервые были проанализированы различные подходы к применению метода, обусловленные обучаемым материалом, с акцентом на их эффективность, преимущества.

#### Список использованной литературы

1. Агабекян К., Г. Матевосян, "Повесть Цмакута", Ереван, 1988.
2. Габриелян В., Наблюдения по пути литературы, Ереван, пр. ЕГУ, 2018.
3. Хачатрян С., "Эффективные приемы обучения, "Фонд Эр. Ф. Эберт", 2020.
4. Матевосян Г., Сочинения, № 1, Ереван, 1985.
5. Современные методы обучения, приемы, упражнения, Лорийский филиал, г. Ванадзор, 2008.

### THREE KEYS AND ONE LOCK FEATURES OF THE APPLICATION OF THE MODERN TEACHING METHOD

Arzumanyan Armenuhi  
YSU, Armenia

#### Summary

**A brief introduction.** In the article entitled "Three keys and one lock features of the application of the modern teaching method", we tried to show different approaches to the application of the method related to the nature of the material being taught and the age group of students. The peculiar features of the application of the method were made visible on the basis of the analysis of literary works included in the school curriculum of Armenian literature.

**Keywords and phrases.** Comparative-analytical thinking, ideological tasks, biophilosophical layers, means of icon painting.

**The problem of the research** is to identify the features of the use of three keys and one lock of the modern teaching method, the advantages of the method as an interesting form of learning: the possibility of a deeper analysis of the material, systematization and generalization of the past material, generalization of knowledge.

In the methodological literature there are a number of scientific studies devoted to the above problem: "Modern teaching methods, techniques, exercises", Lori Branch, Vanadzor, 2008, "Effective teaching methods", S. Khachatryan, Er. F. Ebert Foundation, Armenia, 2020, Lori Branch, Vanadzor, 2008, "Effective teaching methods", S. Khachatryan, Er. F. Ebert Foundation, Armenia, 2020.

Valmont, Bt, "Technology for Literacy and learning". New York. Houghton Mifflin Company, 2006, Elling R. and Cunningham P. "Classrooms that Work". Boston, Ellen and Bacon, 2004.

The above-mentioned authors tried to present the features inherent in modern teaching methods and the features of application in their own ways.

**The purpose** of the article is to identify with interesting observations the essence of the above method, the principles of teaching the material by this method, indicating and justifying the advantages due to the relevant features of this method of teaching, the features arising from the purpose of teaching.

**The novelty** of the research is the consideration of various approaches to the application of the modern method of teaching three keys and one lock. Various approaches to the application of the method due to the training material were analyzed, with an emphasis on their effectiveness and advantages for the first time.

#### References:

1. Agabekyan K., G. Matevosyan, The story of Tsmakut, Yerevan, 1988.
2. Gabrielyan V., Observations on the path of literature, Yerevan, YSU Ave., 2018.
3. Khachatryan S., effective teaching methods, "Er. F. Ebert Foundation", 2020.
4. Matevosyan gr., essays, No. 1, Yerevan, 1985.
5. Modern teaching methods, techniques, exercises, Lori branch of the NIH, Vanadzor, 2008.

*Принято к публикации: 25.10.2021*

*Рецензент: канд пед. наук, ассистент Мери Оганнисян*

*The material was submitted and sent to review: 15.10.2021*

*Was accepted for publication: 25.10.2021*

*Reviewer: Ph.D., Assistant Mary Hovhannisyan*